STATE OF CALIFORNIA
DMV
Department of Motor Vehicles

AB 60 ԿԱԼԻՖՈՌՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ՝ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ ՀԱՐՄԱՐ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Վարորդական իրավունքի վկայականի համար դիմող հաճախորդները պետք է ներկայացնեն անձը հաստատող փաստաթուղթ ԵՎ Կալիֆոռնիա նահանգում մշտաբնակության ապացույց, եթե չունեն իրենցօրինական ներկայության բավարար ապացույց: Հետևյալ ուղեցույցը ձեզ կօգնի որոշել վարորդականիրավունքի վկայականի համար դիմելու ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերը:

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ.

ԱՂՅՈՒՍԱԿ A

Դիմումատուն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերից մեկը (1)։

Կալիֆոռնիա նահանգի վարորդական իրավունքի վկայական կամ Կալիֆոռնիա նահանգի նույնականացման քարտ.

- Կալիֆոռնիա նահանգի վարորդական իրավունքի վկայական (10/2000-ին կամ ավելի ուշ տրված)
- Կալիֆոռնիա նահանգի նույնականացման քարտ (10/2000-ին կամ ավելի ուշ տրված)

Արտասահմանյան փաստաթուղթ, որը վավերական է, հաստատված է Ավտոտրանսպորտի դեպարտամենտի (*Department of Motor Vehicles*, DMV) կողմից, և որի ծագման երկիրը ստուգվել է DMV-ի կողմից՝

- Մեքսիկայի դաշնային ընտրական քարտ (Instituto Federal Electoral [IFE] Credencial para Votar – 2013 թ. տարբերակ)
- Մեքսիկայի Ազգային ընտրական ինստիտուտի քարտ (Instituto Nacional Electoral [INE] Credencial para Votar – 2014 թ. տարբերակ)
- Մեքսիկական անձնագիր (2008-ին կամ ավելի ուշ տրված և թվային լուսանկար ու թվային ստորագրություններառող)
- Մեքսիկայի հյուպատոսական քարտ (Matrícula Consular – 2014 կամ 2022 թթ. տարբերակներ)

Արտասահմանյանանձնագիր,որըվավերականէևհաստատվածէDMV-իկողմից(DMV-իհաստատածանձնագրերիցուցակին ծանոթացեք 4-րդ և 5-րդ էջերում): Հաճախորդը պետք է տրամադրի նաև իր սոցիալական ապահովությանքարտի համարը (SSN), որն էլեկտրոնային եղանակով կարելի է ստուգել Սոցիալական ապահովությանվարչությունում (*Social Security Administration*):

ԿԱՄ

ԱՂՅՈՒՍԱԿ B

Դիմումատուն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերից երկուսը (2)։

Արտասահմանյան փաստաթուղթ, որը վավերական է և հաստատված է DMV-ի կողմից՝

- Արգենտինայի նույնականացման քարտ (Documento Nacional de Identidad [DNI] – 2009 թ. կամ 2012 թ. տարբերակ)
- Բրազիլիայի հյուպատոսական քարտ (Carteira de Matrícula Consular – 2010 թ. տարբերակ)
- Չիլիի նույնականացման քարտ (Cédula de Identidad – 2013 թ. տարբերակ)
- Կոլումբիայի հյուպատոսական քարտ (Consular Registration – 2015 թ. տարբերակ)
- Կոլումբիայի նույնականացման փաստաթուղթ (Cédula de Ciudadanía – տարբերակ 2023)
- Էկվադորի պետական նույնականացման քարտ (Cédula de Ciudadanía – 2006 թ. և 2009 թ. տարբերակ)
- Էկվադորի հյուպատոսական քարտ (Tarjeta de Identificación Consular – 2015 թ. տարբերակ)
- Սալվադորի նույնականացման քարտ (Documento Único de Identidad [DUI] – 2010 թ. կամ 2022 թ. տարբերակ)
- Գվատեմալայի պետական նույնականացման քարտ (Documento Personal de Identificación [DPI] – 2012 թ. տարբերակ)
- Գվատեմալայի հյուպատոսական քարտ (Tarjeta de Identificación Consular – 2002 և 2015 թթ. տարբերակներ)
- Հոնդուրասի հյուպատոսական քարտ (Gobierno de la República de Honduras Matrícula Consular – Consular ID – 2017 թվականի օգոստոսյան տարբերակ)
- Կորեայի նույնականացման քարտ (2016 թ. սեպտեմբերի տարբերակ)
- Նիկարագուայի պետական նույնականացման քարտ (Cédula de Identidad – 2010 թ. տարբերակ)
- Պարագվայի նույնականացման քարտ (República del Paraguay Cédula de Identidad Civil – 2009 թվականի սեպտեմբերյան տարբերակ)
- Պերուի նույնականացման քարտ (Documento Nacional de Identidad [DNI] – 2005 թ. տարբերակ)
- Արտասահմանյան անձնագրեր (DMV-ի հաստատած անձնագրերի ցուցակին ծանոթացեք 4-րդ և 5-րդ էջերում) – Սա տարբերակ է Աղյուսակ A-ում նշված ստուգելի SSN չունեցող հաճախորդների համար։

ԱՂՅՈՒՍԱԿ Շ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Դիմումատուն կարող է ներկայացնել հետևյալ փաստաթղթերից որքան հնարավոր է շատ, որոնք DMV-ն կուսումնասիրի՝ դիմումատուի ինքնությունը հաստատելու նպատակով:

- Դպրոցի փաստաթղթեր, ներառյալ պետական կամ մասնավոր տարրական, միջնակարգ կամ բարձրագույնուսումնական հաստատության, քոլեջի կամ համալսարանի կողմից տրված որևէ փաստաթուղթ, որտեղ նշված էդիմորդի ծննդյան թվականը, կամ որը, եթե դա արտասահմանյան դպրոցի փաստաթուղթ է, կնքված է և ներառումէ դիմորդի լուսանկարն այն տարիքում, երբ կատարվել է արձանագրությունը:
- Միացյալ Նահանգների (ԱՄՆ) տարածքում որևէ կառավարության կամ ԱՄՆ կառավարության կողմից տրվածկամ գրանցված փաստաթղթեր, ներառյալ՝
  - — ԱՄՆ-ի Ներքին անվտանգության նախարարության (*Department of Homeland Security*, DHS) Ձև I-589. Դիմումապաստան ստանալու և վտարումը կասեցնելու համար (*Application for Asylum and for Withholding of Removal*):
  - — ԱՄՆ-ի DHS Ձև I-20. Իրավազորության վկայական «ոչ ներգաղթյալ (F-1) ուսանող» կարգավիճակի համար՝ակադեմիական և լեզու սովորող ուսանողների դեպքում, կամ Իրավազորության վկայական «ոչ ներգաղթյալ (M-1) ուսանող» կարգավիճակի համար՝ մասնագիտական կրթություն ստացող ուսանողների դեպքում (*Certificate of Eligibility for Nonimmigrant* [F-1] *Student Status – For Academic and Language Students or Certificate of Eligibility for Nonimmigrant* [M-1] *Student Status – For Vocational Students*):
  - — ԱՄՆ-ի DHS Ձև DS-2019. Իրավազորության վկայական «փոխանակային այցելու» (J-1) կարգավիճակի համար (*Certificate of Eligibility for Exchange Visitor* [J-1] *Status*):
  - — Դատարանի փաստաթղթեր, որտեղ դիմորդը նշված է որպես դատավարության երրորդ կողմ:
  - — Եկամտահարկի հայտարարագրեր:
  - — Վարորդական իրավունքի վկայական:
- Փաստաթղթեր, որոնք վերաբերում են քաղաքացիական ընտանեկան դրությանը կամ քաղաքացիականմիությանը, ներառյալ ամուսնության վկայականները կամ քաղաքացիական զուգընկերոջ գրանցմանվկայականները: Եթե ամուսնության վկայականի լեզուն տարբեր է անգլերենից, ապա ամուսնությանվկայականին պետք է կցվի անգլերեն վավերացված թարգմանություն կամ թարգմանությունը հաստատող գրավորցուցմունք՝ երդմամբ:
- Ամուսնալուծության վկայականներ: Եթե վկայականի լեզուն տարբեր է անգլերենից, ապա վկայականին պետք էկցվի անգլերեն վավերացված թարգմանություն կամ թարգմանությունը հաստատող գրավոր ցուցմունք՝ երդմամբ:
- Արտասահմանյան անձնագիր, հյուպատոսական նույնականացման քարտ, օտարերկրյա քաղաքացունույնականացման քարտ կամ արտասահմանյան վարորդական իրավունքի վկայական: Եթե արտասահմանյանվարորդական իրավունքի վկայականի լեզուն տարբեր է անգլերենից, ապա վկայականին պետք է կցվի անգլերենվավերացված թարգմանություն կամ թարգմանությունը հաստատող գրավոր ցուցմունք՝ երդմամբ:
- Դիմորդի լուսանկարը պարունակող նույնականացման քարտ, որը տրված է ԱՄՆ-ի տարածքում որևէկառավարության կամ ԱՄՆ կառավարության կողմից:
- Ծննդյան փաստաթղթեր, ներառյալ ծննդյան վկայականը կամ որդեգրման արձանագրությունները:
- Վերոհիշյալ փաստաթղթերից ցանկացածը, որտեղ նշված է դիմորդի ամուսինը, գրանցված քաղաքացիականզուգընկերը, երեխան, ծնողը կամ օրինական խնամակալը՝ պայմանով, որ դիմորդը տրամադրի նաև ծննդյանվկայական, որդեգրման արձանագրություններ, ամուսնության վկայական կամ քաղաքացիական զուգընկերոջգրանցման վկայական՝ հարաբերակցությունը հաստատելու համար:

ԵՎ

ԿԱԼԻՖՈՌՆԻԱ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՄՇՏԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑ

ԱՂՅՈՒՍԱԿ D
Դիմումատուն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերից մեկը (1)։ Մշտաբնակության բոլոր փաստաթղթերում պետք է նշված լինեն դիմորդի անունը և ազգանունը, իսկԿալիֆոռնիա նահանգում բնակության հասցեն պետք է համընկնի վարորդական իրավունքի վկայականիդիմումում նշված փոստային հասցեին, բացառությամբ ստորև նշված վերջին երեք (3) կետերից։
• Վարձույթի կամ վարձակալության պայմանագրեր՝ սեփականատիրոջ կամ վարձատուի և վարձակալի կամմշտաբնակի ստորագրություններով։ • Բնակելի անշարժ գույքի փաստաթղթեր կամ իրավական հիմքեր։ • Գրավադրման փոխառության վճարման անդորրագրեր։ • Տան կենցաղսպասարկման հաշիվներ, ներառյալ բջջային հեռախոսի հաշիվները։ • Դպրոցի փաստաթղթեր։ • Բժշկական փաստաթղթեր։ • Զբաղվածության փաստաթղթեր։ • Կրոնական փաստաթղթեր։ • Ապահովագրական փաստաթղթեր, ներառյալ բժշկական, ատամնաբուժական, տեսողության, կյանքի, տան,վարձակալական և տրանսպորտային միջոցի փաստաթղթերը։ • Ներքին եկամուտների ծառայության (*Internal Revenue Service*) կամ Կալիֆոռնիա նահանգի Արտոնահարկերիխորհրդի (*California Franchise Tax Board*) հարկային հայտարարագրեր։ • Կալիֆոռնիա նահանգի տրանսպորտային միջոցների վկայականներ կամ նավերի տիրապետման իրավունքըհաստատող փաստաթղթեր կամ գրանցումներ։ • Կալիֆոռնիա նահանգի վարորդական իրավունքի վկայականներ կամ նույնականացման քարտեր։ • Հասցեի փոփոխման տեղեկանքներ ԱՄՆ-ի փոստային ծառայության կողմից (Չև CNL 107)։ • ԱՄՆ-ի տարածքում որևէ կառավարության կամ ԱՄՆ կառավարության կողմից տրված փաստաթղթեր։ • Գույքահարկի վճարման անդորրագիր կամ քաղվածք։ • Ֆինանսական հաստատության փաստաթղթեր։ • Անվճար տրամադրվող վավեր նույնականացման քարտի համար դիմում ներկայացնողի հաստատման ձևաթուղթ (*No Fee Identification Card Eligibility Verification*, DL 933)։ Հետևյալ փաստաթղթերում հաճախորդի՝Կալիֆոռնիայում բնակության հասցեի նշման առկայությունը պարտադիր չէ՝ • Դատարանի փաստաթղթեր, որտեղ դիմորդը նշված է որպես Կալիֆոռնիա նահանգի մշտաբնակ։ • Նամակ կամ բլանկ անօթևանների ապաստանից, բռնության ենթարկված կանանց ապաստարանից, շահույթչհետապնդող կազմակերպությունից, կրոնական կազմակերպությունից, գործատուից կամ ԱՄՆ-ի տարածքումորևէ կառավարությունից, որով հաստատվում է դիմորդի բնակվելը Կալիֆոռնիայում։ • Ծնողը, օրինական խնամակալը կամ երեխան կարող են օգտագործել ծննդյան վկայական, իսկ ամուսինը կամգրանցված քաղաքացիական զուգընկերը կարող են օգտագործել ամուսնության վկայական կամ քաղաքացիականզուգընկերոջ գրանցման վկայական, որպեսզի հաստատի իր կապն այն անհատի հետ, ում հասցեով տրված էվերոհիշյալ մշտաբնակության փաստաթղթերից մեկը։

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Հաստատված անձնագրերը, որոնք թվարկված են ստորև, պետք է օգտագործվեն 1-ին էջումնշված փաստաթղթերի հետ միասին:

Եթե որևէ երկրի անձնագիր նշված չէ ստորև, դուք, այնուամենայնիվ, կարող եք Հետախուզական բաժնիԼրացուցիչ վերանայման գործընթացի շրջանակներում դիմել վարորդական իրավունքի վկայականի համար: Ընդունելի փաստաթղթերի ցանկի վերաբերյալ տեղեկատվությանը ծանոթացեք 2-րդ էջում: Այս գործընթացիմասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Վարորդական իրավունքի վկայականի լրացուցիչվերանայում նշանակելու գործընթացի (*Driver License Secondary Review Referral Process*, FFDL 3) Արագ փաստերի հ. 3 գրքույկը: **dmv.ca.gov/portal/dmv/detail/pubs/brochures/fast_facts/ffdl03:**

ԵՐԿՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐՄԱՆ ԹՎԱԿԱՆԸԿԱՄ ՆՇՎԱԾ ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ
Աֆղանստան	2011
Ալբանիա	2009
Արգենտինա	2009
Հայաստան	2011
Ավստրալիա	2005
Ավստրիա	2006
Ադրբեջան	2013
Բահամյան կղզիներ	2010
Բահրեյն	2011
Բանգլադեշ	2010
Բելառուս	2006
Բելգիա	2006
Բելիզ	2005
Բոլիվիա	2010
Բոսնիա և Հերցեգովինա	2009
Բոտսվանա	2010
Բրազիլիա	2006
Բրունեյ	2008
Բուլղարիա	2010
Բուրկինա-Ֆասո	2008
Կաբո Վերդե	2005
Կամբոջա	2005
Կանադա	2010

ԵՐԿՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐՄԱՆ ԹՎԱԿԱՆԸԿԱՄ ՆՇՎԱԾ ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ
Կայման կղզիներ	2008
Չիլի	2013
Չինաստան	2007
Կոլումբիա	10/2009
Կոմորյան կղզիներ	2008
Կոնգո	2008
Կոնգոյի ԺողովրդականՀան ռապետություն	2009
Կոստա Ռիկա	2006
Կոտ դ'Իվուար	2008
Խորվաթիա	2009
Կիպրոս	2010
Չեխիայի Հանրապետություն	2005
Դանիա	2012
Դոմինիկյան Հանրապետու թյուն	2006
Էկվադոր	05/07/13
Եգիպտոս	2008
Սալվադոր	2009
Հասարակածային Գվինեա	2011
Էրիտրեա	2010
Էստոնիա	2005
Ֆիջի Կղզիներ	2012
ֆիջիյի Հանրապետություն	2018
Ֆինլանդիա	2006

ԵՐԿՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐՄԱՆ ԹՎԱԿԱՆԸԿԱՄ ՆՇՎԱԾ ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ
Ֆրանսիա	2006
Գաբոն//	2009
Վրաստան	2005
Գերմանիա	2007
Գանա	2010
Հունաստան	2006
Գվատեմալա	2011
Գվինեա-Բիսաու	2008
Հոնդուրաս	2005
Հոնկոնգ	2006
Հունգարիա	2006
Իսլանդիա	2006
Հնդկաստան	2008
Ինդոնեզիա	2006
Ինտերպոլ	2009
Իրան	2011
Իրաք	2009
Իռլանդիա	2006
Իսրայել	2011
Իտալիա	2006
Ջամայկա	2009
Ճապոնիա	2006
Ղազախստան	2009
Քենիա	2008
Կոսովո	2008
Լատվիա	2007
Լիբիա	2009
Լիտվա	2006
Լյուքսեմբուրգ	2006

ԵՐԿՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐՄԱՆ ԹՎԱԿԱՆԸԿԱՄ ՆՇՎԱԾ ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ
Մակաո	2009
Մակեդոնիա (ՆՀՀ)	2008
Մադագասկար	2007
Մալայզիա	2010
Մալթա	2008
Մեքսիկա	2008
Մոնղոլիա	2011
Չեռնոգորիա	2008
Մարոկկո	2009
Մոզամբիկ	2010
Մյանմա	2010
Նեպալ	2010
Նիդեռլանդներ	2006
Նոր Զելանդիա	2009
Նիկարագուա	2010
Նիգերիա	2007
Նորվեգիա	2005
Պակիստան	06/2005
Պալաու	2008
Օկուպացված պաղեստինյան տարածքներ	2008
Պանամա	2010
Պարագվայ	2012
Պերու	2010
Ֆիլիպիններ	2010
Լեհաստան	2006
Պորտուգալիա	2006
Քաթար	2008
Կորեայի Հանրապետություն	2008
Ռումինիա	2008

ԵՐԿՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐՄԱՆ ԹՎԱԿԱՆԸԿԱՄ ՆՇՎԱԾ ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ
Ռուսաստան	2010
Սբ. Հեղինե կղզի	2012
Սենտ Կիտս և Նևիս	2010
Սան Մարինո	2009
Սան Տոմե և Պրինսիպի	2008
Սենեգալ	2008
Սերբիա	2008
Սիեռա Լեոնե	2010
Սլովակիա	2005
Սլովենիա	2006
Սոմալի	2007
Հարավային Աֆրիկա	2009
Հարավային Սուդան	2012
Իսպանիա	2006
Շրի Լանկա	1/2008
Շվեդիա	2005
Շվեյցարիա	2006
Թայվան	12/29/2008
Տաջիկստան	2010
Թաիլանդ	2009
Թոնգան	07/2003
Թուրքիա	2010
Թուրքմենստան	2008
Ուկրաինա	2007
Արաբական Միացյալ Էմիրություններ	2011
Միացյալ Թագավորություն	2006
Ուրուգվայ	2009
Վանուատու	2010
Վատիկան քաղաք	2008

ԵՐԿՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐՄԱՆ ԹՎԱԿԱՆԸԿԱՄ ՆՇՎԱԾ ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ
Վիրգինյան կղզիներ (բրիտանական)	2007
Զամբիա	2008

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Խնդրում ենք նկատի ունենալ՝ այս փաստաթուղթը ենթակա է փոփոխության